ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2020 թվականի փետրվարի 27-ի թիվ 1.1 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ՏՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/5

ՀՀ Այրումի համայնքապետարանի կարիքների համար էլեկտրական լար, լուսադիոդային լուսատու, խողովակ, մեկուսիչ ձեռքբերման նպատակով կազմակերպված ՏՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2020 թվականի փետրվարի 27-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2020 թվականի փետրվարի 28-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում՝
Հարգելի հանձնաժողով խնդրում ենք տալ պարզաբանում 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով: Ըստ Ձեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերի նշված չափաբաժիններում ներկայացված ապրանքները իրենց մեջ ներառում են խտրականություն:
1. Խնդրում եմ պարզաբանել, նշված սահմանափակումներով հրավեր ներկայացնելն արդյո՞ք չի ապահովում մեկ արտադրողից ապրանքի գնում, պարզաբանել նշելով սահմանափակումների անհրաժեշտությունը եւ նպատակը, քանի որ յուրաքանչյուր արտադրող ունի իր արտադրման յուրահատուկ ձեռագիրը, որը չի կարող ունենալ մեկ այլ արտադրող, սակայն ֆունկցիոնալ առումով թույլ են տալիս հասնել նույն արդյունքին, որին հնարավոր է հասնել հրավերով նախատեսված նշված չափաբաժինների տեխնիկական բնութագրերով:
2. Խնդրում եմ պարզաբանել, արդյո՞ք համարժեք կդիտարկվի այն ապրանքատեսակները, եթե ապրանքատեսականին ըստ իրենց տեխնիկական բնութագրերի չափորոշիչների չեն համապատասխանի Ձեր կողմից ներկայացված ապրանքատեսականիի տեխնիկական չափորոշիչներին, սակայն դրանք ֆունկցիոնալ առումով հնարավորություն են տալիս հասնել այն արդյունքին, որին հնարավոր է հասնել հրավերով նախատեսված նշված չափաբաժինների տեխնիկական բնութագրերով:

Պարզաբանում՝
Հարգելի գործընկեր Ձեր կողմից ներկայացված հարցմանն ի պատասխան հայտնում ենք, որ
1. Հրավերի թիվ 2-րդ և 3-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը կազմվել են առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2 մասի 3)-րդ կետի՝ այն է «գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը» և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526 Ն որոշման 22-րդ կետի՝ այն է «Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ…» պահանջներով և սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանում են մեկից ավելի արտադրողների ապրանքատեսակներ:

Ինչ վերաբերվում է երկրորդ հարցին, ապա տեղեկացնում ենք, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետը՝ Ձեր կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին համարժեքության համապատասխանության վերաբերյալ հարցման պարզաբանում չի տրամադրվում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՏՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Լուսինե Քոչարյանին
Հեռախոս՝093-06-76-56
Էլեկտրոնային փոստ՝lusinekocharjan@mail.ru
ՏՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնման
ընթացակարգի գնահատող հանձնաժողով